

մը, որով կը մերժուի Սարգսի հակառակորդաց զրպարտութիւնը՝ իբր թէ Երուսաղէմի գրամէն կորզած ըլլայ:

Սարգիս հաստատականն առնլէն ետեւ՝ գործերն եւ ինչքերը կարգի դնելով՝ որոշած էր Եւրոպա մեկնիլ: 1744ին ամառը Ջմիւռնիա մեկնեցաւ, ուր ինչպէս վերն ըսինք՝ 1743ին կաթողիկեայ հաւատոյ դաւանութիւնը տուած էր, անկէ ալ շուտով եւ գաղտնի Վենետիկ նաւարկեց, ուր եւ հաստատուեցաւ ուրախութեամբ:

Հետն առած էր իր աշակերտն հեղահոգի Յովհաննէս Վարդապետը, որ Ջմիւռնիացի էր, ազնիւ եւ առաքինի վարուք եւ քաջ գպիր: Այս Յովհաննէս Վ. Ազարեան ունի ձեռագիր ընդօրինակութիւն մը «Թովմայի Աքուինացւոյ Գիրք Եօթն խորհրդոց եկեղեցւոյ զօր ի Հոռոմ իբր 400 տարի հնութիւն ունեցող օրինակէ մ'ընդօրինակած է վեց ամսոյ մէջ՝ սկսեալ 20 Մարտի 1748. այս օրինակին վրայէն յետոյ 1775ին Փետր. 25էն մինչեւ Օգոստ. 2 ընդօրինակած է ի Հոռոմ Գրիգոր Վ. Բաղինեան Ախալցխացի վրահայն, որ եւ կը պահուի Անտոնեան Հարց Մատենադարանը ի Կ.Պոլիս (Թիւ ՃԱ): Բաղինեան ծնած է 1749ին, 1783ին Հոռոմ հայերէնի ուսուցիչ եւ Առաքելական Թարգման էր, 1815ին ձեռնադրիչ Արքեպեղաւ տիտղոսիւ «Կարնոյ», 1833ին եղաւ Միաբան Անտոնեան վանաց, եւ վախճանեցաւ 1836ին ի Հոռոմ: Հրատարակած է փոքրիկ տետրակ մը (23 էջ) 1794ին ի Հոռոմ՝ «Սրբա-